



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

16 հոկտեմբերի 2014 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ա. Խաչատրյանի

Քննության առնելով քաղաքացիներ Ռուդոլֆ Հովակիմյանի եւ Արտակ Զեյնալյանի
անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացիներ
Ռուդոլֆ Հովակիմյանը եւ Արտակ Զեյնալյանը 2014թ. սեպտեմբերի 26-ին դիմել են ՀՀ
սահմանադրական դատարան՝ խնդրելով.

« 1. ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել ՀՀ
Սահմանադրության 18, 19, 20, 3, 14.1-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր,

2. ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «բողոքին
կցվում են /... /, բողոքի պատճենները դատական ակտ կայացրած վարչական դատարանի եւ
դատավարության մասնակիցներին ուղարկելու մասին ապացույցները» դրույթի «ուղարկելու»
դրույթը իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված մեկնաբանությամբ, որով
բացառում է բողոքը՝ էլեկտրոնային ստորագրությամբ՝ էլեկտրոնային փոստով գործը քննող

վարչական դատարան եւ դատավարության մասնակիցներին ուղարկելը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 18 եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր,

3. ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի՝ «վճռաբեկ բողոքն ուղարկվում է վճռաբեկ դատարան, իսկ բողոքի պատճենը՝ վերաքննիչ դատարան ու դատավարության մասնակիցներին» դրույթի «ուղարկվում է» դրույթը իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված մեկնաբանությամբ, որով բացառում է բողոքը՝ էլեկտրոնային ստորագրությամբ՝ էլեկտրոնային փոստով գործը քննող դատարան եւ դատավարության մասնակիցներին ուղարկելը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 18 եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր,

4. ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «վճռաբեկ բողոքին կցվում են ... բողոքի պատճենը գործը քննող դատարան եւ դատավարության մասնակիցներին ուղարկելու մասին ապացույցները» դրույթի «ուղարկել» դրույթը իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված մեկնաբանությամբ, որով բացառում է բողոքը՝ էլեկտրոնային ստորագրությամբ՝ էլեկտրոնային փոստով գործը քննող դատարան եւ դատավարության մասնակիցներին ուղարկելը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 18 եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր,

5. ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «վճռաբեկ բողոքին կցվում են ... վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը)» դրույթը՝ «վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը)» մասով ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 18 եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր,

6. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 5, 6 եւ 91-րդ, 18-րդ հոդվածներին, 101-րդ հոդվածի 7-րդ ենթակետին հակասող եւ անվավեր,

7. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասը, այնքանով, որքանով չի նախատեսում սահմանադրական դատարան դիմելու մասին դատավարության կողմի միջնորդությունը մերժելու որոշումը պատճառաբանելու դրույթ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3 եւ 83.5-րդ, 5, 6 եւ 91-րդ, 18-րդ հոդվածներին, 101-րդ հոդվածի 7-րդ ենթակետին հակասող եւ անվավեր»:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց.

1. Դիմողները գտնում են, որ Վճռաբեկ դատարանի կողմից կիրառված՝ վիճարկվող դրույթները, հակասություն ստեղծելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում զետեղված իրավական դիրքորոշումների, ինչպես նաեւ ՀՀ կողմից վավերացված եւ դրանց պարտադիր կատարման նպատակով երաշխավորած միջազգային պայմանագրերի միջեւ, բացասական եւ անհաղթահարելի իրավական հետեւանքներ են առաջացրել իրենց նկատմամբ:

2. Դիմումի եւ կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողներից՝ Արտակ Զեյնալյանը դատարաններում չի հանդիսացել որպես դատավարության կողմ, ուստի եւ չկա նրա նկատմամբ կայացված վերջնական դատական ակտ, հետեւաբար, նա օժտված չէ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետով ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավունքով:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածն օրենքին է վերապահել սահմանադրական դատարանի դիմելու կարգի սահմանումը: Այդ հոդվածի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարանի դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Այսպիսով, կարելի է փաստել, որ առկա է անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը՝ Արտակ Զեյնալյանի մասով, ՀՀ սահմանադրական դատարանի կողմից մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հիմք:

3. Ինչ վերաբերում է Ռուդոլֆ Հովակիմյանի կողմից բողոքարկված՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասին, ապա դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ վերոնշյալ դրույթը դիմողի նկատմամբ չի կիրառվել: Ուստի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով նշյալ դրույթի մասով անհատական դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի կողմից գործի քննությունը ենթակա է մերժման:

4. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի եւ 157-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի համար առաջացած անբարենպաստ հետեւանքները նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, հետեւաբար, խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականության վիճարկմամբ: Փաստորեն դիմողը, վերոհիշյալ դրույթի սահմանադրականության հարցի վիճարկման պահանջի քողի ներքո իրականում բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց, որն էլ, համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշմամբ սահմանած իրավական դիրքորոշման, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ, հանդիսանում է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

5. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավակարգավորման համաձայն՝ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն այն ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, ովքեր բողոքը ներկայացնում են փաստաբանի միջոցով: Դիմողի պնդմամբ՝ «նշյալ դրույթը անհարկի սահմանափակում է

անձի՝ դատական պաշտպանություն հայցելու սահմանադրական իրավունքը, ինչպես նաև լուրջ խոչընդոտներ է ստեղծում ինքնապաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար»:

Դիմումի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասով քննության ընդունումը մերժելու հիմքեր առկա չեն, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Միաժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը 2014 թվականի հուլիսի 23-ի ՍԴԴԿՈ/1-11 որոշմամբ քաղաքացի Արա Սարգսյանի 09.07.2014թ. դիմումի հիման վրա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործն ընդունել է վարույթ եւ 2014թ. հուլիսի 24-ի ՍԴԱՈ-35 աշխատակարգային որոշմամբ քննության օր է նշանակել ա/թ դեկտեմբերի 9-ը: Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի պահանջներով՝ խնդրո առարկա դիմումը նշյալ հոդվածի մասով կարելի է միավորել վերոնշյալ գործին:

6. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ դիմողի կողմից բողոքարկված 158-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ վճռաբեկ բողոքին, ի թիվս այլնի, կցվում է նաև բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը): Դիմողը կարծում է, որ նշյալ դրույթը սահմանափակում է Սահմանադրությամբ եւ օրենքներով, ինչպես նաև միջազգային պայմանագրերով եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումներով սահմանված՝ դատարան դիմելու ազատ իրավունքի իրացումն այն անձանց համար, ում մինչ օրս անհասանելի են ժամանակակից տեխնիկական միջոցներից օգտվելը եւ/

կամ այն ֆինանսապես խոցելի անձանց, ովքեր չունեն նյութական միջոցներ էլեկտրոնային կրիչ գնելու:

Դիմումի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 5-րդ մասով քննության ընդունումը մերժելու հիմքեր առկա չեն, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերով, 39-րդ հոդվածով եւ 69-րդ հոդվածի 1-ին մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը Արտակ Ջեյնալյանի մասով մերժել:
2. Ռուդոլֆ Հովակիմյանի մասով անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասով եւ 157-րդ հոդվածի 1-ին մասով մերժել:
3. Ռուդոլֆ Հովակիմյանի մասով անհատական դիմումի հիման վրա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասով եւ 158-րդ հոդվածի 5-րդ մասով գործն ընդունել քննության:
4. Առաջարկել անհատական դիմումի հիման վրա գործը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասով միավորել ՀՀ սահմանադրական դատարանում 2014

թվականի հուլիսի 23-ի ՄԴԴԿՈ/1-11 որոշմամբ քննության ընդունված՝ քաղաքացի Արա Սարգսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի հետ:

5. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

16 հոկտեմբերի 2014 թվականի
ՄԴԴԿՈ/2-13